Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

« 06 » Հունիս 2019թ. ք. Ստեփանավան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի Ստեփանավան-Տաշիր տարածաշրջանի բաժանմունքի հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ Թամարա Մատինյանս ուսումնասիրելով՝ 06.06.2019թ-ին վերսկսված թիվ 04861210 կատարողական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 10.12.2018թ-ին տրված թիվ ԼԴ1/058603/18 կատարողական թերթի համաձայն պետք է՝ Կարեն Կնյազի Հունանյանից հօգուտ <<Յունիբանկ>> ԲԲԸ-ի 620.351,8 ՀՀ դրամ:

Պարտապանից պետք է բռնագանձել նաև բռնագանման ենթակա գումարի 5 տոկոսը՝ որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 43, 67 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան Կարեն Հունանյանին՝ սեփականության իրավունքով պատկանող, ներքոնշյալ անշարժ գույքը՝

հ/հ	լոտի անվանումը, նկարագիրը	գույքի քանակը	միավորի գնահատման գինը	միավորի մեկնարկային գինը
1	ՀՀ, Լոռու մարզի, Ստեփանավան քաղաքի, Տերյան փողոցի 3-րդ փակուղու, թիվ 3 հասցեում գտնվող բնակելի տունը	1 (մեկ) հատ	22.800.000 ՀՀ դրամ	17.100.000 ՀՀ դրամ

ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ **harkadir.achurd.am** միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբ « 29 » Հուլիս 2019թ.:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վարչական դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ծ Ա Ն Ո Թ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն. Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում:

Եթե պարտապանն ունի այլ գույք, ապա լոտի մեկնարկային գինը տասներորդ հարկադիր աճուրդից հետո հաջորդ աճուրդներում չի իջեցվում:Եթե պարտապանը չունի այլ գույք, ապա հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում քսաներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ և 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը /գույքը/ չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը:Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի /լոտի/ հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Հարկադիր կատարող,
արդարադատության ավագ լեյտենանտ **Թ. Մատինյան**

13